"НАЦИОНАЛЬНЫЙ АКАДЕМИЧЕСКИЙ ТЕАТР ОПЕРЫ И БАЛЕТА им. А.СПЕНДИАРЯНА" ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ

ALEXANDER SPENDIARIAN OPERA AND BALLET NATIONAL ACADEMIC THEATRE, NON-COMMERCIAL STATE ORGANIZATION

«Ա.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

N 1755-Լ

«29» դեկտեմբերի 2022 թ.
ք. Երևան

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 39-րդ գլխի և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 22-ի N 652-Ա հրամանով հաստատված «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, (այսուհետ՝ Թատրոն) կանոնադրության 24-րդ և 26-րդ կետերի պահանջներով՝

հրամայում եմ.

1. Հաստատել «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հանդիսատեսի վարվելակերպի կանոնները, համաձայն հավելվածի:

2. Թատրոնի «Հասարակայնության, հանդիսատեսի հետ կապերի և մարքեթինգի» բաժնին՝

ա. սույն հրամանը հրապարակել Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում առանձին բաժնում՝ նշելով հրամանի հրապարակման օրը.

բ. ապահովել, որ Թատրոնի տոմսերի վրա հղում կատարվի սույն կանոններին.

գ. ապահովել, որ սույն կանոնները փակցվեն Թատրոնի տոմսարկղում, ինչպես նաև տոմսը գնած հանդիսատեսի պահանջով տրամադրվի նրան:

3. Թատրոնի անձնակազմի կառավարման բաժնի պետին՝ սույն հրամանի մասին սահմանված կարգով իրազեկել Թատրոնի աշխատակիցներին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Թատրոնի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար՝ **Կ. Դուրգարյան**

ք. Երևան
«29» դեկտեմբերի 2022 թ.

Հավելված

«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և
բալետի ազգային ակադեմիական
թատրոն» պետական ոչ առևտրային
կազմակերպության տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատարի
2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1755-Լ հրամանի

ԿԱՆՈՆՆԵՐ

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով կարգավորվում են «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, այսուհետ՝ Թատրոն, հանդիսատեսի մուտքի կարգը, ինչպես նաև Թատրոնի տարածքում հանդիսատեսի ու Թատրոնի իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը:

2. Սույն կանոնները տարածվում են Թատրոնի տարածքում Թատրոնի կամ այլ անձանց կողմից կազմակերպված ցանկացած ներկայացման կամ միջոցառման կամ արարողության, այսուհետ՝ ներակայացում, մասնակցելու կամ ներկա գտնվելու կամ այլ նպատակով տոմսով, հրավիրատոմսով կամ ազատ կամ այլ կարգով մուտք գործող կամ մուտք գործած անձանց՝ այսուհետ՝ հանդիսատես, վրա: Սույն կարգի պահանջները տարածվում են նաև ներկայացումը մեկնաբանող կամ իրենց մասնագիտական պարտականությունների կատարման նպատակով ներկայացմանը ներկա գտնվող լրատվության միջոցների կամ այլ անձանց, իրենց պաշտոնական պարտականությունները կատարող ոստիկանության, իրավապահ կամ պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմինների ներկայացուցիչների վրա, եթե սույն կարգով կամ Թատրոնի կողմից այլ բան չի նախատեսված:

3. Սույն կարգի պահանջները տարածվում են Թատրոն մուտք գործող ցանկացած հանդիսատեսի վրա, անկախ այն հանգամանքից, թե ինչ ներկայացում է դիտում կամ ինչ միջոցառման է մասնակցում, անկախ այն բանից, թե տոմսերը գնել է Թատրոնի ներկայացումներին մասնակցելու, թե այլ անձանց կողմից պայմանագրային հիմունքներով Թատրոնում կազմակերպվող ներկայացումներին կամ միջոցառումներին մասնակցելու նպատակով:

4. Սույն կարգի պահանջները տարածվում են նաև հրավիրատոմսերով կամ Թատրոնի տարածք ազատ մուտք գործած ցանկացած անձի վրա:

5. Թատրոնի իրավասու աշխատակիցները ցանկացած ժամանակ իրավունք ունեն Թատրոնի տարածքում ստուգել հանդիսատեսի կողմից սույն կարգի պահանջների կատարումը, իսկ խախտումներ հայտնաբերելու դեպքում պահանջել վերացնել խախտումները: Խախտում կատարած հանդիսատեսին

ARMENIAN NATIONAL OPERA AND BALLET THEATRE

Թատրոնի իրավասու աշխատողի կամ պահնորդական ծառայողի որոշմամբ կարող են դուրս հրավիրել Թատրոնի տարածքից: Եթե հանդիսատեսը հրաժարվում է կատարել Թատրոնի համապատասխան աշխատակիցների օրինական պահանջները, ապա նրանք պարտավոր են հրավիրել Թատրոնի պահնորդական ծառայության աշխատակիցներին կամ ոստիկաններին, որոնք իրավունք ունեն Թատրոնից հարկադիր դուրս բերել իրավախախտ հանդիսատեսին կամ կիրառել օրենքով նախատեսված հարկադրանքի կամ պատասխանտվության միջոցներ:

ԹԱՏՐՈՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6. Ներկայացում դիտելու համար հանդիսատեսի մուտքն իրականացվում է Թատրոնի հանդիսատեսների համար նախատեսված մուտքից՝ ոչ շուտ քան ներկայացման սկզբից 40 րոպե առաջ, եթե տվյալ ներկայացման կամ տվյալ հանդիսատեսների համար Թատրոնի կողմից մուտքի այլ կարգ չի նախատեսվել: Որևէ անձ՝ որպես հանդիսատես իրավունք չունի մուտք գործել Թատրոն ծառայողական մուտքով:

7. Թատրոն մուտք կարող են գործել միայն տոմսերով կամ հրավիրատոմսերով, այսուհետ՝ տոմս: Եթե ներկայացումը դիտելու համար նախատեսված է ազատ մուտք, ապա այդ դեպքում Թատրոն կարող են մուտք գործել միայն ազատ մուտքի համար նախատեսված քանակի ու տարիքի հանդիսատեսներ: Ազատ մուտքի դեպքում Թատրոնն իրավունք ունի ցանկացած պահի արգելել հանդիսատեսների մուտքը Թատրոն:

ARMENIAN NATIONAL OPERA AND BALLET THEATRE

8. Հանդիսատեսը Թատրոն կարող է մուտք գործել ոչ ուշ քան ներկայացման սկզբից 5 րոպե առաջ, եթե Թատրոնի կողմից տվյալ ներկայացման համար ավելի ուշ ժամկետ չի նախատեսված: Նշված ժամկետից անմիջապես հետո Թատրոնի մուտքի դռները փակվում են: Ցանկացած ուշացած հանդիսատես՝ անկախ հանդիսատեսի ուշացման պատճառներից պարտավոր է սպասել ճեմասրահում մինչև ներկայացման գործողության ավարտը:

9. Թատրոն մուտք գործելիս հանդիսատեսը պարտավոր է հադիսատեսի օգնականին ներկայացնել իր տոմսը: Մեկ տոմսով Թատրոն կարող է մուտք գործել միայն մեկ անձ՝ անկախ տարիքից կամ սոցիալական կամ այլ կարգավիճակից: Արգելվում է Թատրոնի դահլիճի մեկ աթոռի վրա մեկից ավելի անձանց նստելը՝ անկախ տարիքից կամ սոցիալական կամ այլ կարգավիճակից:

10. Թատրոնում անվտագության ապահովման նպատակով Թատրոն մուտքի ժամանակ կարող են կիրառվել մետաղաորսիչ կամ այլ հատուկ սարքեր, որպեսզի բացառվի արգելված իրերի մուտքը Թատրոն:

11. Թատրոն չի կարող մուտք գործել, իսկ մուտք գործած անձը Թատրոնի տարածքից հարկադիր հեռացվում է, եթե

1) անձը գտնվում է ոչ սթափ վիճակում.

2) անձը չունի տոմս, եթե մուտքը տոմսով է կամ անձն ապօրինի է մուտք գործել Թատրոնի տարածք.

3) անձը մուտք է գործում մերկ, կիսամերկ, ներքնաշորով, մարզական հագուստով կամ, հողաթափով, կեղտոտ կամ աշխատանքային արտահագուստով կամ պատառոտված հագուստով.

4) անձի վրայից կամ նրա գույքից տհաճ հոտ կամ գարշահոտություն է գալիս.

5) անձը կասկածվում է օդակաթիլային եղանակով տարածվող տարափոխիկ հիվանդություններով տառապելու մեջ.

6) անձը տառապում է հոգեկան հիվանդություններով և տվյալ պահին գտնվում է գրգռվածության վիճակում.

7) անձը Թատրոն մուտք գործելու պահին խախտում է հասարակական կարգը.

8) անձը մուտք գործելիս ձեռքին ունի չփաթեթավորված սնունդ կամ օգտագործում է սնունդ կամ ծամոն.

9) անձը մուտք գործելիս ծխում է կամ օգտագործում է ծխախոտային արտադրատեսակ, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչ.

10) անձն ապօրինի իրականացնում է ներկայացման ձայնագրություն, տեսագրություն կամ լուսանկարահանում:

12. Արգելվում է այն հանդիսատեսի մուտքը Թատրոնը, ով Թատրոնի տարածք ցանկանում է բերել՝

1) մեծածավալ պայուսակ կամ իր.

2) կենդանի կամ թռչուն.

3) զենք, զինամթերք, հրագործական իր, ծակող, կտրող գործիք.

4) թմրամիջոց կամ հոգեմետ նյութ.

5) քիմիական, դյուրավառ կամ թունավոր նյութ.

6) չփաթեթավորված սննդամթերք.

7) ոգելից խմիչք.

8) ռադիոէլեկտրոնային միջոց, բացի հեռախոսից:

13. Թատրոն մուտք գործող անձինք պարտավոր են կատարել Թատրոնի մուտքը կանոնակարգելու նպատակով Թատրոնի հանդիսատեսի ավագ օգնականի, հանդիսատեսի օգնականի կամ պահնորդի կամ այլ իրավասու ներկայացուցիչների օրինական պահանջը:

14. Թատրոն մուտք գործելու ժամանակ բազմություն առաջանալու դեպքում հանդիսատեսը պարտավոր է մուտք գործել Թատրոն ընդհանուր հերթով: Առանց հերթ մուտք գործել ցանկացող անձանց մուտքն արգելվելու է: Առանց հերթ Թատրոն կարող են մուտք գործել միայն հաշմանդամություն ունեցող անձինք:

ARMENIAN NATIONAL OPERA AND BALLET THEATRE

15. Հայտերով տոմսեր գնած կազմակերպությունների հանդիսատեսների միաժամանակյա մուտքի դեպքում կարող են տոմսերը ներկայացվել համապատասխան կազմակերպության ներկայացուցիչի կողմից: Հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից հայտերով վաճառված տոմսերով դպրոցական հանդիսատեսը, ինչպես նաև մինչև 16 տարեկան հանդիսատեսն իրավունք ունի մուտք գործել Թատրոնի տարածք միայն իր օրինական ներկայացուցիչի (ծնող, ազգական, մանկավարժ և այլն) հետ, որը պատասխանատվություն է կրում անչափահասի կողմից Թատրոնի կանոնակարգերի խախտման համար:

16. Ներկայացումը մեկնաբանող կամ իրենց մասնագիտական պարտականությունների կատարման նպատակով լրատվության միջոցների մուտքը թույլատրվում է միայն Թատրոնի տնօրինության կողմից սահմանված լրատվության միջոցների համար նախատեսված մուտքի տոմսի առկայության դեպքում:

17. Իրենց պաշտոնական պարտականությունները կատարող ոստիկանության, իրավապահ կամ պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմինների ներկայացուցիչներն իրավունք ունեն Թատրոն մուտք գործել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ Թատրոնի համապատասխան իրավասու անձին ներկայացնելով դրանք հիմնավորող համապատասխան փաստաթղթեր:

18. Թատրոնի գործունեության նկատմամբ հսկողություն կամ վերահսկողություն իրականացնելու նպատակով համապատասխան իրավասություն ունեցող անձինք Թատրոնի տարածք պետք է մուտք գործեն միայն վարչական մուտքից: Նրանք չեն հանդիսանում հանդիսատեսներ, սակայն նրանց վրա ևս տարածվում են սույն կարգի պահանջները, եթե մուտք են գործել ներկայացումը դիտելու նպատակով:

ARMENIAN NATIONAL OPERA AND BALLET THEATRE

ՀԱՆԴԵՐՁԱՐԱՆ

19. Հանդիսատեսը պարտավոր է իր վերնահագուստը հանձնել Թատրոնի հանդերձարան: Հանդերձարան պետք է հանձնվեն նաև տղամարդկանց գլխարկները, իսկ կանայք կարող են կրել միայն այն գլխարկները, որոնք նրանց հարդարանքի մասն են և չեն խոչընդոտելու այլ անձանց դիտել ներկայացումը: Հանդերձարան կարող են հանձնվել նաև կոշիկներ կամ հանդիսատեսի այլ հագուստ կամ մեծածավալ գույք կամ պայուսակ:

20. Հագուստի հետ կամ առանց հագուստի հանդերձարան չեն կարող հանձնվել դրամական միջոցներ, արդուզարդի առարկաներ, թանկարժեք մետաղներ կամ քարեր, վերնահագուստ չահամարվող այլ արժեքավոր իրեր:

21. Թատրոնը պատասխանատվություն չի կրում հանդիսատեսի կողմից հանդերձարան հանձնած հագուստում թողնված դրամական միջոցների, արդուզարդի առարկաների, թանկարժեք մետաղների կամ քարերի կամ այլ արժեքավոր իրերի կորստի համար:

22. Հանդերձարան հանձնած հագուստի կամ այլ գույքի համար հանդերձապահը տրամադրում է համար, որը հանդիսատեսը պարտավոր է հանձնել հանդերձապահին հագուստը կամ այլ գույքը հետ ստանալու համար:

23. Հանդերձարանի համարը կորցրած հանդիսատեսի հանդերձարան հանձնված հագուստը կամ այլ գույքը տրվում է վերջում: Նշված հանդիսատեսից կարող է գանձվել կորցրած հանդերձարանի համարի արժեքը:

24. Հանդերձարանի կողմից հանդիսատեսի սպասարկումը սկսվում է նրանց մուտքի պահից ու դադարում է ներկայացման ավարտից 40 րոպե հետո:

ԹԱՏՐՈՆԻ ԲՈՒՖԵՏԸ

25. Թատրոնի բուֆետի աշխատանքները սկսվում են ներկայացումից 30 րոպե առաջ ու ավարտվում ներկայացումից 5 րոպե առաջ՝ մինչև ներկայացումը սկսվելու մասին ազդարարող վերջին զանգը: Բուֆետը գործում է նաև ներկայացման ընդմիջման ժամանակ՝ մինչև ներկայացման հաջորդ գործողության սկզբից 5 րոպե առաջ՝ մինչև ներկայացման հաջորդ գործողությունը սկսվելու մասին ազդարարող վերջին զանգը:

26. Բուֆետին արգելվում է հանդիսատեսին կամ այլ անձանց սպասարկել ներկայացման ժամանակ:

27. Թատրոնի բուֆետում կարող են վաճառվել գազով կամ անգազ ջրեր, սուրճ, թեյ, փոքրիկ բուտերբրոդներ, ոչ շերտավոր խմորից պատրաստված բլիթներ, կարկանդակներ, ինչպես նաև Թատրոնի տնօրենի կողմից թույլատրված այլ սնունդ: Բուֆետում չեն կարող վաճառվել արևածաղիկ, ադի-բուդի, չիփսեր, ընդեղեն, շերտավոր խմորից սննունդ, կրեմով թխվածք, պաղպաղակ, ծխախոտ, ինչպես նաև փշրվող կամ արագ հալվող սնունդ:

28. Հանդիսատեսն իրավունք չունի իր կողմից բերված սնունդ ընդունել բուֆետում կամ Թատրոնի այլ վայրում՝ բացառությամբ հաշմանադամություն ունեցող անձանց կամ հիվանդ անձանց դիետիկ կամ հատուկ սննդից, ինչպես նաև ջրերից:

29. Հանդիսատեսը բուֆետից գնած սննուդը կարող է ուտել միայն դրա համար նախատեսված վայրում:

30. Արգելվում է սնունդը տանել դահլիճ կամ դահլիճում սնվել: Հանդիսատեսը կարող է դահլիճում միայն ջուր խմել՝ չխոչընդոտելով այլ հանդիսատեսներին կամ ներկայացման ընթացքին:

ՄՈՒՏՔ ԴԱՀԼԻՃ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԴԻՏՈՒՄ

31. Հանդիսատեսն իրավունք ունի դահլիճ մտնել ոչ շուտ, քան ներկայացման սկզբից 30 րոպե առաջ: Հանդիսատեսը պարտավոր է դահլիճ մտնել երրորդ զանգից հետո մինչև ներկայացման սկսվելը:

ARMENIAN NATIONAL OPERA AND BALLET THEATRE

Ներկայացումից ուշացած հանդիսատեսը կարող է զբաղեցնել հանդիսատեսի օգնականի կողմից առաջարկված այլ տեղ մինչև ներկայացման ընդմիջումը:

32. Հանդիսատեսը պարտավոր է զբաղեցնել միայն իր տոմսի վրա նշված տեղը: Հանդիսատեսն իրավունք չունի զբաղեցնել այլ տեղ, անգամ, եթե այդ տեղն ազատ է, եթե Թատրոնի կողմից այլ բան չի նախատեսված:

33. Եթե տվյալ ներկայացման համար մուտքն ազատ է, ապա հանդիսատեսը կարող է զբաղեցնել ցանկացած ազատ տեղ: Ազատ մուտքի դեպքում Թատրոնն իրավունք ունի սահմանափակել ազատ տեղերը կամ կատարել տեղերի պահում: Եթե հանդիսատեսը գնել է ազատ տեղերի տոմս, ապա նա իրավունք ունի դահլիճ մտնել ներկայացման սկզբից 5 րոպե առաջ և զբաղեցնել միայն ազատ տեղը:

34. Թատրոնի հադիսատեսի ավագ օգնականը, օգնականը, պահնորդական ծառայողն իրավունք ունի դահլիճում ստուգել հանդիսատեսի տոմս ունենալու փաստը և զբաղեցրած տեղի և տոմսում նշված տեղի համապատասխանությունը: Նրանք իրավունք ունեն դուրս հրավիրել անտոմս հանդիսատեսին, իսկ այն հանդիսատեսին, որը չի զբաղեցրել տոմսում նշված տեղը տեղափոխել նրա տոմսում նշված տեղը:

35. Ազատ տեղ լինելու դեպքում ժամանակին դահլիճ չմտած հանդիսատեսին կարող է առաջարկվել ներկայացումը դիտել դահլիճի այլ տեղից:

36. Դահլիճ մտնելիս հադիսատեսները պարտավոր են անմիջապես անջատել բջջային հեռախոսները կամ դրանք փոխադրել անձայն ու անլույս զանգերի ռեժիմի:

ARMENIAN NATIONAL OPERA AND BALLET THEATRE

37. Արգելվում է դահլիճ բերել՝

1) վերնահագուստ կամ գլխարկ.

2) սննդամթերք.

3) տեսա կամ լուսանկարահանող սարքեր կամ ձայնագրող սարքեր.

4) մեծածավալ իրեր.

5) այլ իրեր, որոնք արգելված են բերել Թատրոն:

38. Ներկայացման ժամանակ հանդիսատեսը պետք է նստած լինի իր տեղում: Արգելվում է կանգնել կամ նստել աստիճաններին, շարքերի միջև կամ դռների մոտ կամ դահլիճի անցումներում:

39. Ներկայացման ժամանակ արգելվում է՝

1) խոսել այլ անձանց հետ կամ խոսել հեռախոսով կամ աղմկել.

2) օգտագործել սնունդ կամ հյութեր.

3) շրջել դահլիճում.

4) միացնել երաժշտություն կամ հեռախոսի կամ լապտերի լույսերը.

5) վառել կրակայրիչներ.

6) կատարել տեսա կամ լուսանկարահանումներ կամ ձայնագրություններ:

40. Հանդիսատեսն իրավունք ունի դուրս գալ դահլիճից միայն ներկայացման ավարտից հետո: Անձնական կարիքների կամ այլ անհետաձգելի նպատակով հանդիսատեսն իրավունք ունի դուրս գալ դահլիճից՝ չխոչընդոտելով այլ հանդիսատեսների կողմից ներկայացման դիտումը: Այս դեպքում դահլիճից դուրս եկած հանդիսատեսը կարող է դահլիճ վերադառնալ միայն ընդմիջման ժամանակ:

41. Հանդիսատեսը պարտավոր է՝

1) կատարել սույն կանոնների պահանջները.

2) աղբը նետել միայն դրա համար նախատեսված տեղում.

3) չաղտոտել Թատրոնի տարածքը, աթոռները.

4) չվնասել Թատրոնի գույքն՝ այդ թվում աթոռները.

5) աղտոտված կամ կեղտոտ հագուստով չնստել աթոռներին.

6) չվազել Թատրոնի տարածքում.

7) չաղմկել.

8) չխախտել հասարակական կարգն ու անձանց համակեցության կանոնները.

9) չխախտել հրդեհային անվտանգության կանոնները և սանիտարական նորմերը.

10) չվառել որևէ կրակ.

11) չօգտագործել հրագործական իրեր կամ սարքավորումներ.

12)հարգալից վերաբերմունք դրսևորել այլ անձանց, ինչպես նաև Թատրոնի աշխատակիցների նկատմամբ:

42. Թատրոնի տարածքում հանդիսատեսն իրավունք ունի գտնվել միայն հանդիսատեսի համար նախատեսված վայրերում՝ ճեմասրահներ, սանիտարական սենյակներ, դահլիճ: Հանդիսատեսին արգելվում է մուտք գործել որևէ ծառայողական սենյակ, բեմ, ծառայողական բուֆետ, հետնաբեմ, հարդարման սենյակ, կարգավորման սենյակներ, նվագախմբի փոս և հանդիսատեսի համար չնախատեսված այլ տարածք:

43. Հանդիսատեսը պարտավոր է ներկայացումից հետո 30 րոպեի ընթացքում դուրս գալ Թատրոնի տարածքից:

44. Հանդիսատեսը պարտավոր է փոխատուցել իր մեղքով Թատրոնին հասցված վնասը: Անչափահասների կողմից Թատրոնին հասցված վնասի համար պատասխանատվություն են կրում ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները: Հայտերով Թատրոն մուտք գործած հանդիսատեսի կողմից Թատրոնին հասցված վնասի համար պատասխանատվություն է կրում նաև հայտ ներկայացրած կազմակերպությունը:

45. Հանդիսատեսը արտիստների համար նախատեսված նվերներն ու ծաղիկները նրանց պետք է փոխանցի միայն Թատրոնի պահնորդական ծառայության աշխատակիցների թույլտվությամբ՝ հանդիսատեսի օգնականների միջոցով:

ARMENIAN NATIONAL OPERA AND BALLET THEATRE

46. Թատրոնն իրավունք ունի առանձին դեպքերում հանել որոշ սահմանափակումներ կամ մեղմացնել դրանք, որի մասին նախօրոք տեղեկացվում է հանդիսատեսին:

47. Թատրոնը պատասխանատվություն չի կրում Թատրոնում հանդիսատեսի կորցրած իրերի համար: Կորցրած իրերի վերաբերյալ հանդիսատեսը կարող է հաղորդում ներկայացնել Թատրոնի վարչակազմին կամ պահնորդական ծառայությանը: Կորցրած իրերը գտնվելու դեպքում դրանք կվերադարձվեն դրանց տերերին:

ARMENIAN
NATIONAL OPERA
AND BALLET THEATRE